



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

15.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/18

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդուղը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.07.2017թ. թիվ 03/27-1/12327-17 «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.05.2017թ. թիվ Ե-3121 և 05.06.2017թ. թիվ Ե-3840 գրությունների հիման վրա, 06.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 12.05.2017թ. թիվ Ե-3121 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ կից ներկայացնելով ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի վերաբերյալ տեղեկատվությունը:

Պատվիրատուն 05.06.2017թ. թիվ Ե-3840 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել նաև Armeps համակարգի միջոցով Ընկերության կաղմից հայտը ներկայացնելու օրվա և ժամի մասին տեղեկատվություն:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ Արթուր Եղիազարյանը:

3. «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2017թ. թիվ 03/27-1/12327-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Ռ.Հակոբյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/18 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2017թ. թիվ 03/27-1/12327-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի 12.05.2017թ. թիվ Ե-3121 և 05.06.2017թ. թիվ Ե-3840 գրությունները, «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի ներկայացված հայտը, «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 և 11.05.2017թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Կոմիտե) 03.05.2017թ. կատարված հարցումը, Կոմիտեի կողմից 05.05.2017թ. ներկայացված եզրակացությունը, Կոմիտեի կողմից 03.08.2017թ. Խորհրդին տրամադրած տեղեկանքը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ն տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգի 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ, և 26-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ն ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության 2-րդ կետով որոշել է ընթացակարգի 19-րդ չափաբաժնով «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին ճանաչվել որպես առաջաին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 03.05.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին՝ 17.04.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացություն:

Կոմիտեի կողմից 05.0.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 7 (յոթ) ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

Հանձնաժողովը 11.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի հայտը՝ վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընթացակարգի քննության նիստին Ընկերության ներկայացուցիչը Խորհրդին ներկայացրեց Կոմիտեի կողմից տրամադրած տեղեկանքը, որի համաձայն «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի 19.04.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունը կազմում է 7 (յոթ) ՀՀ դրամ, իսկ իրական գերավճարը՝ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության համար անհասկանալի է, թե որտեղից է առաջացել 7 (յոթ) ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունը, երբ Ընկերությունն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գերավճար՝ խնդրելով Խորհրդին հարցում կատարել Կոմիտեին,

պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ Ընկերության կողմից ժամկետանց հարկային պարտավորության իսկությունը:

Խորհուրդը 31.07.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով վերջինիս տալ եզրակացություն այն մասին, արդյոք Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (17.04.2017թ.) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, թե՛ ոչ:

Խորհրդի հարցմանն ի պատասխան, 03.08.2017թ. Կոմիտեն տրամադրել է եզրակացություն, առ այն, որ «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ի ժամկետանց հարկային պարտավորությունը 17.04.2017թ. դրությամբ կազմում է 7 դրամ եկամտային հարկի տույժի գծով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

- 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 17.04.2017թ., դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

- 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն

մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2017թ. «Ռուբեն Հակոբյան» ԱԶ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ